

**ՍՐՔԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՄԵԿՆԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ
ԿԸ ԿԱՏԱՐԷ ԽԱՉՔԱՐԻ ՕԾՈՒՄԸ ԵՒ BOAT HOUSE-Ի ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ**

Առաջնորդ Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Արժ. Տ. Ներսէս Քհնյ. Հայրապետեանի, Երկու-
շաբթի, Յուլիս 26ի առաւօտեան մեկնեցաւ Առաջնորդարանի Ամառնային ճամբար, որուն երկորդ
շաբաթը կը սկսէր:

Սրբազան Հայրը ճամբարին մասնակցող հոգեւորականներու հետ միասին օծունը կատարեց
Խաչքարի մը, որուն բարերարներն են՝ Բրշ. Տոքթ. Սարգիս եւ Տիկին Թալին Մեսրոպեան: Ապա
օրհնութեան արարողութիւնը կատարեց Boat House-ի եւ իր ոգեւորիչ պատգամը տուաւ երիտասար-
դութեան: Ուրախ ենք յայտնելու, թէ Triple X եղբայրակցութեան Սըգոյա Մասնաճիւղը 40,000 Տոլարի
նուիրատուութեամբ բարերարը հանդիսացաւ Boat House-ի: Իսկ Տէր եւ Տիկին Մարք Մելքոնեան
դաշտային միջանցքները նուիրեցին ի յիշատակ իրենց հոր՝ Սուրէն Մելքոնեանի: